ՀՀ փաստաբանների պալատի նախագահի՝ «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի հերթական ընդհանուր ժողով հրավիրելու մասին» **07.08.2017թ. № 225-Լ որոշմամբ *2017 թվականի սեպտեմբերի 9-ին, ժամը 09^{00}-ից մինչև 18^{00}***-ն ՀՀ փաստաբանների պալատի՝ ***Երևան քաղաքի Զաքիյան 2 հասցեում գտնվող*** վարչական շենքի 2-րդ հարկի սրահում, հեռակա կարգով ***(առանց ընդհանուր ժողովի գումարման) հրավիրվել է ՀՀ փաստաբանների պալատի հերթական ընդհանուր ժողով՝ հետևյալ օրակարգային հարցերով.***

- ՀՀ փաստաբանների պալատի նախագահի ընտրություն.
- ՀՀ փաստաբանների պալատի ***կանոնադրության (1.5 կետի) փոփոխության հաստատում:***

1. Ընդհանուր ժողովի օրակարգային հարցերով **քվեարկությունը** սկսվում է **2017 թվականի սեպտեմբերի 9-ին, ժամը 09^{00}-ից և ավարտվում է նույն օրը՝ ժամը 18^{00}-ին**:
2. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի **թեկնածուների առաջադրումը (ինքնաառաջադրումը)** սկսվում է **2017 թվականի օգոստոսի 12-ից (ներառյալ) և ավարտվում է 2017 թվականի օգոստոսի 17-ին (ներառյալ)**:
3. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի **թեկնածուների քարոզչությունը** սկսվում է **2017 թվականի օգոստոսի 18-ից (ներառյալ) և ավարտվում է 2017 թվականի սեպտեմբերի 7-ին, ժամը 18^{00}-ին**:
4. Յուրաքանչյուր փաստաբան **քվեարկությանը պետք է մասնակցի անձամբ:**
5. Քվեարկության օրը պետք է ներկայանալ **անձը հաստատող փաստաթղթով կամ փաստաբանի վկայականով:**
6. Քվեարկության գաղտնիությունը քվեարկող փաստաբանի համար ոչ միայն իրավունք է, այլև՝ պարտականություն:

Ընդհանուր ժողովի հետ կապված անհրաժեշտ այլ տեղեկություններին կարող եք ծանոթանալ ՀՀ փաստաբանների պալատի www.advocates.am կայքէջից:

Բեռնել ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 07.08.2017թ. № 225-Լ որոշումը.

Բեռնել ՀՀ փաստաբանների պալատի հերթական ընդհանուր ժողով հրավիրելու մասին ծանուցումը.